ՍՅՈՒՆԻՔ (ԶԱՆԳԵԶՈՒՐ)

173. ԹԱՔԱՎԸԵՐԵՆ ՏՂԱՆ ՕԶՈՒՄ ՉԻ ՄԸԵՈՒՆԵ...

Մին թաքավրերու մենակ մին տղա յա ինում։ էտ տղեն պուհուր վախտան թաքավրերը մին տան փակում ա, վրեր ըշխարքես շառը նան խերը, փիսը նան լավը շուտ չի տրեանա, շուտ չի գյիդա։ Տղան վրեր տանում ա տասնօխտը տրրնկան, իրան ութաղան տուս ա օնում, շոռ ածում։ Հինչ վրեր տրեսնամ ա, հորը հըրցընում ա, թե էս հի՞նչ ա, հաերը լոխ ասում ա՝ էս ծառ ա, էս մարթ ա՝, էս կենդյ ա, էս խանութ ա, էս փողոց ա, էս տուն ա, էս իստի յա, էն ինդի յա։ Ծշնում ըն տրեսնում մին մըեռած մարթ ըն տանում, վրեր թաղեն։ Տղան հորը հըրցընում ա, թե՝ պա է՞ս հինչ աս։ Հաերը թե՝ մըեռալ աս։ Տղան հըրցընում ա, թե մըեռալը հինչ ա՞, հաերն ասում ա.—Մարթը վրեր ապրում ա, մըծանում, ետնան էլ մըեռնում ա, էլ ապրում չի։ Տղան ասում ա՝ կլեխ չըմ ինգյում։ Հաերը թե՝ ըշխարքումըս հինչ վրեր կա՝ մարթ ա, հեյվան ա, ղուշ ա, գազան ա, վրեր ծնվում ըն, ապրում, լոխ մին էլ պիտի մըեռնեն, տանանն հունցը մին քար, մին փադ, վրեչ օտրեն, վրեչ խմրեն, վրեչ տրեսնան, վրեչ ըսկանան, վրեչ գյիդան թե ըշխարքումըս հինչ կա, հինչ չի կա։ Ա՛յ, մըեռնելը էտ աս։ Տղան թե՝ լավ, արտեն գյիդացե, վրեր ըշխարքումըս մըեռնել էլ կա, ես կլեխ ըմ յոր օնում, քյինիմ կորչիմ։ Հաերը թե՝ ա՛յ վրերթի, մենակ տու չըս, տա ամմենքին հետե յա ածեթ, առանց տրան կյանք չի ինիլ, մինը

[1] Տղամարդ (Ս. Բ.)։

մեռնել պիտի, վըեր մինը ծնվի, ես էլ պիտի մեռնեմ, դու էլ, էս մինն էլ, էն մինն էլ՝ մին խոսկավ լոխ, մին էլ օրից սերունդ, օրից մարթիքյ պիտի ապրեն, կյանքեն օրենքը էտ ա, տա վըեչ ես ըմ ըստեղծալ, վըեչ տու, աստված ա ամմենքին տի կարգ տիրալ։ Տղան թե՝ չէ, վըեր չէ, վըեր մըեռնելն ախտ ա, ես քյինում ըմ կորչիմ։ Թաքավըերը, իրան նազիր-վազիրն, մոտե մարթիքյ հինչ անում ըն, կարում չըն տրան համոզացնեն, էտ պահնեն։

Տղան կլ՛խ ա յոր օնում, քյինում։ Շատ ա քյինում, թե խըեղյ, հանում ա մին կյետու ղրաղ, տըեղ մթըեն ա ինգյում։ Էտ կյետեն ղրաղեն էլ մին մըեծ ծառ ա ինում, մին հաչիլայլայ[1] յիրան պուն տիրած։ Էտ ծառեն տակեն քիշերը կենում ա, առավոտը կյետն անց կենում, քյինում մին շատ մըեծ բաղ, տըեսնում էտ բաղումը ըշխարքես տակեն հինչ ծառ, հինչ քար ասես, մեչին կա։ Բաղն էլ էնքան գյեղեցիկ ա, վըեր ասել չի ինիլ։ Էտ բաղումն էլ մին տոն կա, տանը մեչան էրկու մարթ ըն կյամ, տրան տանում ըն սաղ բաղը ման ածում, քշտըրըներեն պահում։

Վըեր իրեք օր անց ա կենում, տղան հորն ու մորը, իրան երգյիրին կարոտում ա։ Տրանց ասում ա.—Լա՛վ, հինչքան ինձ ծըեր քշտին պահալ ըք, պատվալ ըք, շնորհակալ ըմ, օղում ըմ քյինամ իմ երգյիրը։ Տրանք տրան հինչքան օղում ըն համոզացնեն, վըեր քյինա վըեչ, կարում չըն։ Տրանա ետը էտ էրկու մարթուցն անա մինը տրան իրեք տանձ ա տամ, ասում.—Հինչ տըեղ էլ ինգյիս, հինչի յէլ պըտահես, էս տանձերան վըեչ մինը ծըեռքատ տաս վըեչ, պըենդ տեղ կըպահես։

Տղան տանձերը յոր ա օնում, հըեն ինում։ Քյինում ա տըեսնում կյետը ցըմաքած, տըեղը մինակ քարերը մնացած։ Եռնան էլ եչում ա, տըեսնում էն պեցո՛ւր ծառը կա վըեչ, հըե յա ինո՛ւմ, քյինում հանում իրան երգյիրը, տըեսնում հորը պալատեն տըեղը կյո՛ւթանը քցած, վար ըն անում։ Տըեղեն մարթուցը հըրցընում ա, ասում.—Պա էս իմ հորըս պալատեն տըեղն ա, իրեք օր առաչ ըմ ես ըստեղաս տուս եկալ, էս իրեք օրեն ղաթումը իմ հէր հինչ տըե՞ղ ա քյինացալ, վըեր պալատը քանդա՛լ ըն, տըեղը վար ըն անում։ Էտ մարթիքյը հըրցընում ըն, թե տու հո՞ւ վըես, քեզ ճինա՛նչում չընք։ Տա թե՝ ես էսհինչ թաքավըերեն տղան ըմ։ Տրանք ասում ըն.—Ըստըեղեքյ տի թաքավըեր չի կա, թաքավըերեն պալատը էսհինչ տըեղն ա, քյինի ընդըեղ հըրցըրու, քեզ կասեն։

Տա քյինում ա թաքավըերեն պալատը քթնում, ասում.—

---

[1] Արագիլ (Ս. Բ.)։

Դա ես եկալ ըմ իմ հոր երգյիրը, նա մեհենդյ կա վրեն։ Տրան հըր-ցընում ըն, թե տու հո՞ւ վրա, տա ասում ա.—Ես էսհինչ թաքա-վըրեին տղան ըմ։ Կյիրքը պոնց ըն անում, եշում, տըեսնում տրա հարը էտ երգյիրումը իրեք հազար տարե առաջ ա թաքավըրեր իլալ։ Տըեղ կլծի ըն ինդյում, վըեր էտ տղան անմահներեն եր-գյիրումն ա իլալ, իրեք հազար տարեն իրեք օրու տեղ ա անց կա-ցալ։

Վերջը, էտ տղան մնամ ա տըեղ, տըեղեւ թաքավըրերեն էլ մին ախճիգյ ա ինում, պիրում ըն տրա յիրա փսակում, առաջին օրը տղան տանեեն մինը տուս ա օնում, տամ հարսեն, ինքյը դռա-տին մըթանում ա, տանում մաչ մարթ։ Թաքավըրերեն պուճուր ախճիգյն էլ վըեր հալա նոր ար ըսկըսալ շոռ կյալը, էտ տանեը վըեր տըեսնում ա, կյամ ա ինգյրում տրա վըեններըը. մինն էլ տուս ա օնում, տամ տրան։ Տա դռատին կլխեն մազերը սիպտակում ա, տանում հլիվըր մարթ, նոր մըեռն ա ինգյում, վըեր անմահա-կան այգում էտ տանեերը իրան տալիս տալ ըն պըենդ տըեղ կըպահես։ Մըեռքեն մնացած ա ինում մին տանե։ Վազ ա տամ, վըեր հանե անմահական այգին, քյինում ա, քյինում, վըեր կյեռն անց ա կենում, լիհա մին վըեննն ա. ինում մնացած, վըեր մտնե անմահական այգին, սաղանեքյը էտ մին տանեն էլ ըն ծըեռքան խլում։ Տա լիհա տի վըեննեն մինը տիրած անմահական այգու սահմանեն, մինը՝ տունտումը, մըեռնում ա, մնամ տըեղ։